



14 (169). ՎԱՐԴ ՈՒ ԲԼԲՈՒԼ

Կէղնին-չէղնին՝ տղե մե ու աղջիկ մե կէղնին: Տղեն իմալ լուսնակի շող, աղջիկն իմալ էրկնքի ցող: Տղեն ու աղջիկ կրտսնստ գիրար, կը սիրին գիրար, աղջիկն ամոթու կը դառնա վարդ, տղեն կսկծու կը դառնա բլբուլ, կըսե:

— Իմ սե՛ր ու սավդա, բացվի՛, շո՛ւտ բւյժի, տեսնամ դքու յերես, տեսնամ՝ նո՛ր մեռնիմ:

Կըսե տղեն, շատ կը մնա, շատ բաքլա կէնե, մըջ սրտին՝ փուշ, մըջ հոգուն՝ վուշ, գիլա, կը փակե գաչքեր, կը քնի, խորո՞ւնդ կը քնի, էլ չըտեսնա գաղջկան:

Կըսին՝ շուրի յըսօր բլբուլ չը կոնա տեսնա՝ վարդն ի՛մալ կը բացվի, ե՛ր կը բացվի, պշղլած կիշկե՛ չը կոնա տեսնա ու յիմնա, էդ յապով լե գիշեր ցերեկ հունգուռ-հունգոսռ գիլա վըր վարդի թփին:

